2020 թ.

ԵԻԲ-ի ԱԿՆԱՐԿ

European Investment Bank Group

Եվրոպական ներդրումային բանկն ամեն տարի բարելավում է միլիոնավոր մարդկանց կյանքեր՝ սկսած Էստոնիայում մաքուր էներգիայի ծրագրի իրականացումից վերջացրած խմելու ջրի ծրագրով Լեսոտոյում կամ ավելի լավ հիվանդանոցային պայմանների ապահովմամբ Խորվաթիայում:

Որպես Եվրոպայի կլիմայի պաշտպան հանդիսացող բանկ՝ մենք օգնում ենք, որ աշխարհը համապատասխանի Փարիզի համաձայնագրով և Կայուն զարգացման նպատակներով ստանձնած պարտավորություններին: Մենք խոստանում ենք, որ հաջորդ տասնամյակի ընթացքում կստեղծենք 1 տրիլիոն եվրո արժողությամբ՝ կլիմային ուղղված ներդրումների հնարավորություններ:

1958 թվականից սկսած ավելի քան 160 երկրում մենք վարկեր և փորձագիտական խորհրդատվություն ենք տրամադրել հազարավոր ծրագրերի համար: Մենք ներդնում ենք կատարում Եվրոպայի ապագայի համար՝ ձեռք ձեռքի տված աշխատելով Եվրոպական հանձնաժողովի և մի շարք այլ հաստատությունների հետ:

Հանդիսանալով ամենամեծ և ամենաբնապահպան բազմակողմանի վարկատու՝ մենք օգնում ենք, որ տնտեսությունները բարգավաճեն, ստեղծվեն աշխատատեղեր և խթանում ենք հավասարությունը: Մենք մեր աշխատանքը չափում ենք նրանով, թե որքանով է այն օգնում հասարակությանը, որովհետև յուրաքանչյուր ներդրման արդյունքում ինչ-որ մեկի կյանքն է բարելավվում:

Խորվաթիայի Ռիջեկա քաղաքում նոր Մոր և մանկան հիվանդանոցն ավելի է հեշտացնում կյանքը 600 000 մարդու համար: Այն աջակցություն է ստացել ԵՆԲ-ի վարկի կողմից, որին ավելացել է նաև խորհրդատվական աջակցությունը ԵՆԲ-ի և Եվրոպական հանձնաժողովի կողմից:

Մեր ազդեցությունը 2019 թվականին

280	միլիարդ եվրոյի ներդրումներ, որոնք աջակցել են ԵՆԲ-ի գործողություններին
72,2	միլիարդ եվրո՝ ԵՆԲ խմբի ֆինանսավորման համար
1 095	ստորագրված ծրագիր
50,3	միլիարդ եվրո՝ ստացված պարտատոմսերի շուկաներից
Ավելի քան 25	միլիարդ եվրո փոքր բիզնեսների ֆինանսավորման համար
Ավելի քան 19	միլիարդ եվրո կլիմայի փոփոխությանն ուղղված գործողությունների համար
Ավելի քան 16	միլիարդ եվրո շրջակա միջավայրի պաշտպանության համար
Ավելի քան 14	միլիարդ եվրո նորարարությունը խթանելու համար
4,4	միլիոն աշխատատեղի պահպանում փոքր բիզնեսներում
10	միլիոն մարդ խմում է ավելի անվտանգ ջուր
12	միլիոն մարդ ստանում է ավելի լավ բուժսպասարկում
7,4	միլիոն տնային տնտեսություն արդեն ունի էլեկտրականություն
117	միլիոն մարդ ստանում է ավելի լավ որակի շարժական կապ
631	միլիոնի լրացուցիչ ուղևորություն հանրային տրանսպորտով
1,7	միլիոն մարդ առերեսվում է ջրհեղեղների նվազեցված ռիսկի հետ
5,1	միլիոն քառակուսի մետր էներգաարդյունավետություն ապահովող շինությունների համար

2019 թվականին ԵԼԲ-ն աջակցել է ծրագրերի, որոնք կարտադրեն 13 177 ՄՎտ էներգիա, ինչը բավականաչափ կլինի այն մատակարարել 7,4 միլիոն տնային տնտեսության համար:

Կլիմա

Կլիման մեր սերնդի ամենամեծ մարտահրավերն է: Այն կորոշի մեր երեխաների բարօրությունը և կյանքի տևողությունը: Մեր՝ կլիմային և էներգիային ուղղված նպատակները նոր չափորոշիչներ են սահմանում Եվրոպայում և նրա սահմաններից դուրս: Մոտ ապագայում մենք կդադարենք աջակցել հանածո վառելիքին և մեր ներդրումների 50%-ը կնվիրաբերենք կլիմային ուղղված գործողություններին և կայունությանը:

Մենք օգնում ենք հաղթահարել կլիմայի փոփոխությանն ուղղված ազդեցությունները խոցելի համայնքներում՝ պաշտպանելով կենսաբազմազանությունը և խթանելով կայուն գյուղատնտեսությունը: Մենք նաև պահպանում ենք բնական ռեսուրսները, և շրջակա միջավայրն անվտանգ վայր ենք դարձնում հետագա սերունդների համար: Մենք մեր ցանկացած գործողություն իրականացնելիս մտածում ենք կլիմայի մասին: Մեր կողմից աջակցություն ստացած յուրաքանչյուր ծրագիր նորարարությունների, փոքր բիզնեսների կամ ենթակառուցվածքների ոլորտում պետք է համապատասխանի կլիմայի մեր նպատակներին:

ԵՆԲ-ի աջակցությամբ էստոնական Էլկոգեն ընկերությունը զանգվածային շուկային է տրամադրում արդյունավետ և մաքուր վառելիք՝ բջջի վրա հիմնված էլեկտրականություն:

Նորարարություն

Նորարարությունը Եվրոպային մրցունակ է պահում և ստեղծում է բարձր վարձատրությամբ աշխատատեղեր: ԵՆԲ խումբը եվրոպական ընկերություններին հնարավորություն է տալիս ստեղծել գերժամանակակից տեխնոլոգիաներ: Մենք նորարար գաղափարները հաջող բիզնեսի ենք վերածում:

Բանկն աջակցում է մեծամասշտաբ հետազոտություններով և զարգացմամբ զբաղվող, ինչպես նաև փոքր, մասնագիտացված ընկերություններին: Մեր ներդրումներն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հեռահաղորդակցությունը, ավիացիան, բժշկությունը և թվայնացումը հաստատման արգասիք է, որը լրացուցիչ ֆինանսավորում է գրավում մասնավոր սեկտորից:

Մենք աջակցում ենք նորարարության մի շարք փուլեր: Բանկի վարկերի շնորհիվ՝ համալսարանները կարող են կառուցել և ընդլայնել իրենց հետազոտական կառույցները, իսկ ստարտափերը կարող են մեծացնել իրենց աշխատողների թիվը և բարելավել սարքավորումները: Մենք գաղափարներ ենք ներարկում մարդկանց ուղեղներ, որով նրանք կարող են աշխարհն ավելի լավ ապրելու վայր դարձնել:

Իտալիայում ԵՆԲ-ի և Unicredit-ի համատեղ պիլոտային ծրագիրն աջակցում է կանանց կողմից առաջնորդվող մի քանի հարյուր նորարար բիզնեսներ:

Ներառում

Բանկը շահավետ պայմաններով առաջարկում է ֆինանսական ապրանքների մի մեծ շարք: Մենք վարկեր ենք տրամադրում թե՛ մասնավոր, թե՛ պետական սեկտորին: Մենք հզորացնում ենք փոքր բիզնեսները և երիտասարդներին: Մենք աջակցում ենք կին ձեռներեցներին՝ տալով նրանց վարկերի հնարավորություններ և ղեկավար պաշտոններ: Ֆինանսավորումը և բիզնես խորհրդատվություն ստանալն հնարավոր ենք դարձնում ցածր եկամուտ ունեցող բնակչության, ինքնազբաղված անձանց և միկրոձեռնարկությունների համար: Հավաստիանալով, որ ոչ ոք չի անտեսվում:

ԵՆԲ-ն չի վարկավորում ծրագրի արժեքի կեսից ավելին: Այս կերպ մենք հանդես ենք գալիս որպես խթանող ուժ՝ ավելի ներգրավելով մասնավոր սեկտորը, ավելացնելով ծրագրերի համար նախատեսված ներդրումների մակարդակը: Մենք նաև տեխնիկական աջակցություն ենք առաջարկում՝ հավաստիանալու, որ ծրագիրը հաջողություն է ունենալու:

Աֆրիկայի Լեսոտոյում իրականացված ԵՆԲ-ի զարգացման ծրագիրը ցածրադիր գոտիների շատ հատվածներում խմելու մաքուր ջրի և ջրահեռացման հնարավորություն է ապահովում 300 000 մարդու համար:

Կայունություն

ԵՆԲ-ն գումար է ստանում՝ միջազգային կապիտալի շուկաներում պարտատոմսեր թողարկելով: Մեր վարկային գերազանց վարկանիշը մեզ թույլ է տալիս ֆինանսական միջոցներ հավաքել լավ տոկոսադրույքներով: Ահա այս առավելություններն էլ փոխանցում ենք հաճախորդներին:

Մեր կապիտալ շուկայի փորձագետները ստեղծել և զարգացրել են կանաչ և կայուն պարտատոմսերի շուկան: Այժմ մենք կանաչ պարտատոմսերի ամենամեծ վերազգային թողարկողն ենք: Այս պարտատոմսերն աջակցում են վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության, մաքուր ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներին: Մենք իրականացնում ենք կայուն ֆինանսավորման աշխատանք:

Հանձնառություն

Մենք թափանցիկ և հաշվետու ենք մեր բոլոր գործողությունների համար: Մեր բնապահպանական և սոցիալական բարձր չափորոշիչները մեզ գերազանց գործընկեր են դարձնում: Մենք ունենք տնտեսագետների, ճարտարագետների, ֆինանսական վերլուծաբանների և կլիմայի մասնագետների բարձր որակավորում ունեցող, պատրաստակամ և բազմազան անձնակազմ, ովքեր ամեն օր աշխատում են տեղական փորձագետների, հաստատությունների և կառավարությունների հետ ամբողջ աշխարհով մեկ:

Մեր առաջարկների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ **www.eib.org/products.**

Եվրոպական ներդրումային բանկ
info@eib.org
www.eib.org

European Investment Bank
The EU bank

#BelieveInSmall

ԵՆԲ խումբը բաղկացած է Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ) և Եվրոպական ներդրումային հիմնադրամից (ԵՆՖ):

ԵՆԲ-ն Եվրոպական միության բանկ է: Այն աշխարհի ամենամեծ բազմակողմանի վարկատու և վարկառուն է: Հիմնված լինելով Լյուքսեմբուրգում՝ ԵՆԲ-ն տեղական և շրջանային գրասենյակների մեծ ցանց ունի Եվրոպայում և նրա սահմաններից դուրս:

ԵՆՖ-ն աջակցում է փոքր բիզնեսներին՝ բարելավելով նրանց ֆինանսավորման հասանելիությունը Եվրոպայում և Եվրոպայից դուրս գտնվող մի քանի այլ երկրներում: Նորարարությունը և զբաղվածությունը խթանելու նպատակով՝ ԵՆՖ-ն նախագծում և զարգացնում է վենչուրային և աճի կապիտալի, երաշխիքների և միկրոֆինանսավորման գործիքներ:

© Եվրոպական ներդրումային բանկ, 2020
Նկարները՝ GettyImages, Shutterstock

Տպագրման թուղթը՝ Condat Silk FSC Mix:
ԵՆԲ-ն օգտագործում է Անտառների պահպանման խորհրդի (ԱՊԽ) կողմից հաստատված թուղթը: Դրա պատճառն այն է, որ տվյալ թուղթը պատրաստվում է ծառեր սիրող մարդկանց կողմից:

Տպագրությունը՝
Imprimerie Centrale

MIX
Paper from responsible sources
FSC® C103749

02/2020
print: QH-04-20-021-HY-C ISBN 978-92-861-4549-0 doi:10.2867/342982
pdf: QH-04-20-021-HY-N ISBN 978-92-861-4516-2 doi:10.2867/20336